

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ¹

Հայերենի բարբառագիտական աստլասի /ՀԲԱ/ նյութերում Արագածոտնի մարզում գործածվող բարբառներից ընդգրկված են հետևյալ խոսվածքներն ու ենթախոսվածքները. Մուշի բարբառի Հարթավանի, Մելիքյուղի, Արագածի, Ափնագյուղի, Արայի և Մուլքի գյուղերի (այսուհետև՝ Հարթավանի գյուղախումբ) և Արագածի, Ղալայչիի և Ուտմայի (այսուհետև՝ Արագածի գյուղախումբ), Վարդաբլուրի ենթախոսվածքներ, Վանի բարբառի Ապարանի ենթախոսվածք, Դիաղինի բարբառի Ծաղկաշենի ենթախոսվածք, Կարինի բարբառի Թալինի, Կարմրաշենի, Լեռնապարի և Նիգավանի ենթախոսվածքներ, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի ենթախոսվածքներ, Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածք, Փարպիի, Օշականի, Մուղնիի, Կոշի, Տեղերի, Բյուրականի «Երևանի մայլա» թաղի ենթախոսվածքներ, Խոյ-Մարաղայի բարբառի Բյուրականի, Անտառուտի, Վարդենիսի և Օհանավանի ենթախոսվածքներ:

Հոդվածում ցույց են տրվում երկրագործական աշխատանքներում հաճախ կիրառվող բահ, երկբերան բրիչ, արոռ, գուրան, փոցխ, մանգաղ, գերանդի գործիքների անվանումները Արագածոտնի մարզում գործածվող բարբառների վերոնշյալ 1 խոսվածքում և 2 տասնյակից ավելի ենթախոսվածքներում:

Հոդափոր գործիքների անվանումները
Արագածոտնի մարզում

Բահ

Բահ բառանունն ընդգրկված է ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրի «հնչյունական զուգաբանություններ» բաժնում (հոդված 685):

Արագածոտնի մարզում գործածվող բարբառներում բառանունը գրական *բահ* ձևով գրանցված է միայն Երևանի կամ Արարատյան բարբառի Փարպիի ենթախոսվածքում:

Ըստ ՀԲԱ նյութերի՝ հնչյունական տարբերակներ են արձանագրվել Երևանի կամ Արարատյան բարբառի Օշականի, Մուղնիի, Կոշի, Բյուրականի «Երևանի մայլա» թաղի /*բ'ահ*/, Մուշի բարբառի Վարդաբլուրի, Արագածի գյուղախմբի, Դիաղինի բարբառի Ծաղկաշենի, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի /*բ'ահ*/, Խոյ-Մարաղայի բարբառի Վարդենիսի և Օհանավանի /*բ'ահ*/, Կարինի բարբառի Թալինի, Լեռնապարի և

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Կարմրաշենի /բ'այ/, Վանի բարբառի Ապարանի, Խոյ-Մարաղայի բարբառի Բյուրականի և Անտառուտի /պ'սի/ ենթախոսվածքներում:

Գրանցվել են առանձին հնչաձևեր Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում /բ'սի/, նույն բարբառի Տեղերի /պ'սի/, Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի /բ'սի/, Կարինի բարբառի Նիգավանի /պ'այ/ ենթախոսվածքներում:

Երկրերան բրիչ

Երկրերան բրիչը հայերենի բարբառներում կոչվել է բազմաթիվ անուններով: ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրում այն «քլունգ» անվամբ ընդգրկված է «բառային զուգաբանություններ» բաժնում (հոդված 98):

Բառանունը *քլունգ* ձևով գրանցվել է Երևանի կամ Արարատյան բարբառի Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում ու նույն բարբառի Փարպիի, Օշականի, Մուղնիի, Կոշի և Բյուրականի «Երևանի մայլա» թաղի, Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի, Կարինի բարբառի Լեռնապարի, Դիադինի բարբառի Ծաղկաշենի, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի, Խոյ-Մարաղայի բարբառի Բյուրականի և Վարդենիսի ենթախոսվածքներում: Տարբեր հնչաձևեր են արձանագրվել Երևանի կամ Արարատյան բարբառի Տեղերի /ք'լունգ/, Խոյի բարբառի Օհանավանի և Վանի բարբառի Ապարանի /ք'լունգ/, Խոյ Մարաղայի բարբառի Անտառուտի /ք'լունգ/ ենթախոսվածքներում: Մուշի բարբառի Արագածի գյուղախմբի ենթախոսվածքներում գործածվել է *քուլընգ* եզակի բառաձևը:

ՀԲԱ նյութերում ընդգրկված բարբառների ենթախոսվածքներում «երկրերան բրիչ» հասկացությունն ունեցել է նաև այլ բառանվանումներ՝ փեղաղ, կիրկա, դագմա:

Փեղաղ բառանունը գործածվել է Կարինի բարբառի Նիգավանի ենթախոսվածքում:

Կիրկա բառանունն արձանագրվել է Մուշի բարբառի Վարդաբլուրի և Վանի բարբառի Ապարանի ենթախոսվածքներում: Մուշի բարբառի Արագածի գյուղախմբի ենթախոսվածքներում վկայվել է *կիրգա* եզակի հնչաձևը:

Ղագմա բառանունը գրանցվել է Մուշի բարբառի Վարդաբլուրի և Կարինի բարբառի Լեռնապարի ենթախոսվածքներում: Առանձին հնչաձևեր են արձանագրվել Վանի բարբառի Ապարանի, Կարինի բարբառի Թալինի և Կարմրաշենի /ղ'ագմա/, Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի և Կարինի բարբառի Նիգավանի /խ'ագմա/ ենթախոսվածքներում:

Ինչպես նկատելի է, որոշ ենթախոսվածքներում գործածվել է 2-3 բառանուն.

Հարթավանի գյուղախումբ՝ *քլունգ, խագմա,*

Նիգավան՝ *փեղաղ, խագմա,*

Վարդաբլուր՝ *կիրկա, դագմա,*

Լեռնապար՝ *քլունգ, դագմա,*

Արագածի գյուղախումբ՝ *քուլընգ, կիրգա*²,

Ապարան՝ *քըլունգ, կիրկա, դագմա*:

Հողավարման և հողահարթեցման գործիքների անվանումները

Արագածոտնի մարզում

Արոր

Արոր բառանունն ընդգրկված է ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրի «բառային զուգաբանություններ» բաժնում (հոդված 95):

Արագածոտնի մարզում գործածվող բարբառներում բառանունը գրանցված է հնչյունական *հարոր* (Կարինի բարբառի Նիգավանի ենթախոսվածք), *հըրոր* (Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի և Վարդաբլուրի ենթախոսվածքներ), *հըրոր* (Մուշի բարբառի Ղարայչիի, Արագածի, Ուտմայի ենթախոսվածքներ) ձևերով:

Արագածոտնի՝ ՀԲԱ նյութերում ընդգրկված բարբառների խոսվածքներում ու ենթախոսվածքներում «արոր» հասկացությունն ունեցել է նաև այլ բառանվանումներ՝ *չութ, վեցկի, չորոց*:

Չութ բառանունը հիմնականում գործածվել է Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում ու մի քանի ենթախոսվածքներում (Փարպի, Օշական, Մուղնի, Կոշ և Բյուրականի «Երևանի մայլա»), Կարինի բարբառի Կարմրաշենի և Բայազետի բարբառի Կարբիի ենթախոսվածքներում: Բառը *չուտ* հնչյունական տարբերակով արձանագրվել է Կարինի բարբառի Լեռնապարի ենթախոսվածքում:

Վեցկի բառանունը հիմնականում գրանցվել է Խոյի բարբառի ենթախոսվածքներում (Կարդենիս /*վեցկի*/, Օհանավան /*վեսկի, վուեսկի*/, Բյուրական, Անտառուտ /*վըսկի*/: Հնչյունական տարբերակներ են արձանագրվել նաև Վանի բարբառի Ապարանի /*վիցկի*/, Կարինի բարբառի Թալինի և Բայազետի բարբառի Կարբիի ու Քուչակի /*վեսկի*/, Երևանի կամ Արարատյան բարբառի Տեղերի /*վիսկի*/) ենթախոսվածքներում:

Չորոց բառանունը վկայված է միայն Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի և Դիադինի բարբառի Ծաղկաշենի ենթախոսվածքներում:

Ինչպես նկատելի է, որոշ ենթախոսվածքներում գործածվել է 2 բառանուն.

Հարթավանի գյուղախումբ՝ *հըրոր* և *չորոց*,

Վարդաբլուր՝ *հըրոր* և *չութ*,

Կարբի՝ *վեսկի* և *չութ*:

Գուրթան

Բառանունը «գուրթան» նշանակությամբ ՀԲԱ նյութերում գրանցվել է միայն հնչյունական տարբերակներով (ընդգրկված է ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրի «հնչյունական զուգաբանություններ» բաժնում /հոդված 695/):

² Նշված հնչաձևերը եզակի են ընդհանրապես ՀԲԱ նյութերում գրանցված երկրագործական տերմինաբանության մեջ:

Գրական *գութան* ձևով բառանունն արձանագրված է միայն Երևանի կամ Արարատյան բարբառի Փարպիի խոսվածքում:

Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում, որոշ ենթախոսվածքներում (Օշական, Մուղնի, Կոշ, Բյուրականի «Երևանի մայլա»), Մուշի բարբառի Վարդաբլուրի, Դիաղինի բարբառի Ծաղկաշենի, Կարինի բարբառի Թալինի, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի ենթախոսվածքներում գործածվել է *գ՛նլթան*, Կարինի բարբառի Կարմրաշենի, Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի, Կարինի բարբառի Լեռնապարի ենթախոսվածքներում՝ *գ՛նլտան*, Մուշի բարբառի Արագածի գյուղախմբի ենթախոսվածքներում՝ *գ՛նլտ՛ան* հնչյունական տարբերակները:

Հնչյունական եզակի տարբերակներ են գրանցվել Երևանի կամ Արարատյան բարբառի Տեղերի /*կ՛նլթան*/, Վանի բարբառի Ապարանի /*կ՛նլթան*/, Կարինի բարբառի Նիգավանի /*կնլտան*/ և Խոյ-Մարաղայի բարբառի Բյուրականի և Անտառուտի /*կ՛նլտան*/ ենթախոսվածքներում:

Փոցիս

Փոցիսը սովորաբար գործածվել է հողավարման և հողահարդարման աշխատանքներում: *Փոցիս* բառանունն ընդգրկված է ՀՖԱ նյութերի հավաքման ծրագրի «բառային զուգաբանություններ» բաժնում (հոդված 96):

Փոցիս ձևով բառը գործածվել է Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում, նույն բարբառի Փարպիի, Օշականի, Մուղնիի, Մուշի բարբառի Վարդաբլուրի, Վանի բարբառի Ապարանի, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի, Խոյ-Մարաղայի բարբառի Վարդենիսի ենթախոսվածքներում: Հնչյունական տարբերակներ են փաստվել Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի, Արագածի գյուղախմբի, Կարինի բարբառի Լեռնապարի /*փոծիս*/, Կարինի բարբառի Թալինի և Կարմրաշենի, Դիաղինի բարբառի Ծաղկաշենի, Երևանի կամ Արարատյան բարբառի «Երևանի մայլայի», Խոյ-Մարաղայի բարբառի Օհանավանի /*փոցըիս*/ ենթախոսվածքներում: Հնչյունական եզակի տարբերակ է վկայվել Կարինի բարբառի Նիգավանի ենթախոսվածքում /*փոծըիս*/:

Արագածոտնի՝ ՀՖԱ նյութերում ընդգրկված բարբառների ենթախոսվածքներում «փոցիս» հասկացությունն ունեցել է նաև այլ բառանվանումներ՝ *ղըրմըղ*, *մանգէք*:

Ղըրմըղ բառանունը գործածվել է Երևանի կամ Արարատյան բարբառի Կոշի, Խոյ-Մարաղայի բարբառի Վարդենիսի և Անտառուտի ենթախոսվածքներում: Ընդհանրապես հայերենի բարբառներում հազվադեպ հանդիպող հնչյունական տարբերակներ են փաստվել Մուշի բարբառի Արագածի գյուղախմբի /*կըրմըղ*՝ բառակզբի դ-կ հնչյունափոխությամբ³ և Երևանի կամ Արարատյան բարբառի Տեղերի /*ղըրմըղ*՝ ը հնչյունի անկմամբ⁴ ենթախոսվածքներում:

³ ՀՖԱ նյութերում *կըրմըղ* ձևը գրանցվել է նաև Խարբերդ-Երզնկայի բարբառի Երզնկայի խոսվածքում, Կարինի բարբառի Քյուրակղարայի և Խոյ-Մարաղայի բարբառի Արարատի /Դավալու/ ենթախոսվածքներում:

⁴ ՀՖԱ նյութերում *ղըրմըղ* ձևը գրանցվել է նաև Ղարաբաղի բարբառի Շինուհայրի ենթախոսվածքում:

Մանգէն բառանունը գործածվել է միայն Խոյ-Մարաղայի բարբառի Բյուրականի ենթախոսվածքում՝ *մանգէն* ձևով:

Ինչպես նկատելի է, որոշ ենթախոսվածքներում գործածվել է 2 բառանուն.

Վարդենիս՝ *փոցի* և *ղըրմըղ*,

Արագածի գյուղախումբ՝ *փոծի* և *կըրմըղ*:

Հնձի գործիքների անվանումները Արագածոտնի մարզում

Մանգաղ

Մանգաղ բառանունն ընդգրկված է ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրի «հնչյունական զուգաբանություններ» բաժնում (հոդված 686):

Գրական *մանգաղ* ձևով բառը գործածվել է Երևանի կամ Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքում և նույն բարբառի Օշականի, Կոշի և Մուղնիի ենթախոսվածքներում, Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի, Վարդաբլուրի, Արագածի գյուղախմբի, Կարինի բարբառի Թալինի և Լեռնապարի, Դիաղինի բարբառի Ծաղկաշենի, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի ենթախոսվածքներում:

Վանի բարբառի Ապարանի, Խոյ-Մարաղայի բարբառի Վարդենիսի և Երևանի կամ Արարատյան բարբառի Փարպիի ենթախոսվածքներում արձանագրվել է *մանգէղ* հնչյունական տարբերակը: Առանձին հնչյաձևեր են վկայվել Երևանի կամ Արարատյան բարբառի Տեղերի /*մանգաղ*/ և Բյուրականի «Երևանի մայլա» թաղի /*մանգէղ*/, Խոյ-Մարաղայի բարբառի Օհանավանի /*մանգւնղ*/ ենթախոսվածքներում:

Գերանդի

Գերանդի բառանունը նույնպես ընդգրկված է ՀԲԱ նյութերի հավաքման ծրագրի «հնչյունական զուգաբանություններ» բաժնում (հոդված 729): Բառանունը գրական ձևով ՀԲԱ նյութերում չի արձանագրվել:

Մուշի բարբառի Հարթավանի գյուղախմբի, Վարդաբլուրի և Արագածի գյուղախմբի, Դիաղինի բարբառի Ծաղկաշենի, Բայազետի բարբառի Կարբիի և Քուչակի, Խոյ-Մարաղայի բարբառի Վարդենիսի և Օհանավանի ենթախոսվածքներում արձանագրվել է *գ՛էրընդի* հնչաձևը: Երևանի կամ Արարատյան բարբառի Փարպիի ենթախոսվածքում գործածվել է *գէրանդու*, իսկ նույն բարբառի Աշտարակի խոսվածքում և Մուղնիի ու Օշականի ենթախոսվածքներում՝ *գ՛էրանդու* բառաձևերը: Կարինի բարբառի Կարմրաշենի և Լեռնապարի ենթախոսվածքներում գրանցվել է *գ՛էրանդի*, Խոյ-Մարաղայի բարբառի Բյուրականի և Անտառուտի ենթախոսվածքներում՝ *կ՛էրընդի* ձևերը:

Առանձին հնչյունական տարբերակներ են գրանցվել Երևանի կամ Արարատյան բարբառի Բյուրականի «Երևանի մայլա» թաղի /*գէրանդի*/, Տեղերի /*կէրանդի*/ և Կոշի /*գէրընդի*/, Կարինի բարբառի Նիգավանի /*կէրընդի*/ և Թալինի /*կ՛էրընդի*/ ենթախոսվածքներում:

Օշականի ենթախոսվածքում վկայվել են նաև *ն* հնչյունի հավելմամբ *գ շրանդուն* և բառակզրի *գ > ջ* հնչյունափոխությամբ *ջ շրանդուն* ձևերը, որոնք եզակի են ընդհանրապես հայերենի բարբառների երկրագործական տերմինաբանության մեջ⁵:

Анаит Абрамян – Наименования некоторых сельскохозяйственных инструментов, используемых в диалектах Арагацотна. В статье показаны наименования наиболее часто используемых сельскохозяйственных инструментов (лопата, кирка, соха, плуг, грабли, серп, коса), которые используются на субдиалекте Аштарака и более 2 десятков говорах региона Арагацотна Республики Армения.

⁵ Բառակզրի *գ > ջ* հնչյունափոխությամբ, բայց առանց *ն* հնչյունի հավելմամբ *ջերընդի* և *ջերընդու* բառաձևեր են գործածվել ՀՀ Գեղարքունիքի մարզի համապատասխանաբար Նորատուս և Ծովագյուղ բնակավայրերում /տե՛ս Ռ.Հ.Բաղրամյան, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, 1972, էջ 199/: